ՉԻՎԱ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Նաիրի Սարգսյան

Հեռախոս՝ +374 93.220266

Բնակչություն՝ 837

Չիվա գյուղը գտնվում է Վայոց Ձոր մարզի հարավ-արեմտյան մասում, Եղեգնաձոր-Երևան մայրուղու վրա, ծովի մակերևույթից բարձր է 1116 մ: Գյուղը մարզկենտրոնից ունի 23 կմ հեռավորություն, իսկ մայրաքաղաքից՝ 102 կմ: Գտնվում է Վեդի-ներքին Արփա նախալեռնային գոտում, ձմեռվա տևողությունը 4 ամիս է: Չիվան, տեղակայված է Վարդենիսի լեռների ճյուղավորություններից կազմված ձորամիջում: Ունի առկա 305 տնտեսություն: Գյուղի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի <<Սյունիքի պատմություն>> աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ: Սակայն դա սկիզբը չէ, այն ունի առավել հին պատմություն և անվանվել է նաև Չվա, Չուվա և այլն: Գյուղի անունը չի ստուգաբանվում: Ժողովրդական ավանդության համաձայն՝ 735թ. Մոզի կործանիչ երկրաշարժից ահաբեկված փախչող մարդիկ հասնում են Չիվայի տարածք, հանգիստ առնում և գոչում՝ չիք վայ, չկա վայ, որտեղից էլ առաջանում է գյուղի անունը: Չիվան հարուստ գյուղ է եղել, Չիվայի ձորը հայտնի է բազմատեսակ պտղատու այգիներով: Գյուղը վանքապատկան է եղել: 13- րդ դարում հատուկ հրովարտակով տրվել է Ջալալ Օրբելյանին որպես կալվածք: Մետաքսի ճանապարհի մի ճյուղը Սելիմով հասնելով Արենի, մի ճյուղով էլ թեքվում էր Չիվա՝ուղղություն վերցնելով դեպի Դվին նԱյրարատ: Ենթադրվում է, որ գյուղը բնակեցված է եղել դեռևս հեթանոսական ժամանակաշրջանից: Այդ մասին են վկայում հին գյուղատեղի տարածքում հայտնաբերված կարասներով թաղումները: Գյուղը մի քանի անգամ կարճ տեղափոխումներ է ապրել, սկզբում `ձորամեջ, ապա՝ դիմացի սարալանջ, ուր կան քրիստոնեական վկայություններ՝ ժամտուն, խաչքարեր: Ռուս-պարսկական պատերազմից հետո այստեղ են եկել հայ-գաղթականներ Խոյից, Սալմաստից: Երկար ժամանակ Չիվա գյուղում հայերի հետ ապրել են նաև այլազգիներ: 1988 թվականից գյուղն ամբողջապես դարձավ միատարր: Բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունն ու հողագործությունն է: Հիմնականում մշակում են՝ ծիրան, դեղձ, խաղող, բանջարաբոստանային կուլտուրաններ և հացահատիկ: Գյուղն ունի միջնակարգ դպրոց , մշակույթի տուն, բուժկետ: Գյուղում գործում է առևտրի մի քանի կետեր: